ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԻԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 73 - 74 (16876) ՇԱԲԱԹ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

COVID - 19

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՍԿՍՎՈՒՄ Է ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԵՐԿՐՈՐԴ ԱԼԻՔԸ, ԹԵԵՎ ԽՈՒՃԱՊԻ ԱՌԻԹ ՉԿԱ, ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է»

Սեպտեմբերի 10-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի գլխավորությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որտեղ քննարկվեցին վերջին օրերի կորոնավիրուսով վարակման դեպքերի ավելացման եւ այդ կապակցությամբ ձեռնարկվելիք միջոցառումների հարցերը:

Ինչպես հայտարարեց Գիորգի Գախարիան, Վրաստանում սկսվել է կորոնավիրուսի համավարակի երկրորդ ալիքը, թեեւ սա խուճապի առիթ չէ, եւ համավարակային իրավիճակը լրիվությամբ վերահսկվում է:

- Այսօրվա (սեպտեմբերի 10) 57 եւ երեկվա 44 դեպքերն անմիջականորեն մատնանշում են, որ երկրում համավարակային իրավիճակն աստիճանաբար փոխվում է: Ինչպեսեւ ենթադրում էինք, երկրորդ ալիքը, փաստորեն, սկսվել է: Կարեւորն այն է, որ խուճապի հիմքեր գոյություն չունեն, քանի որ լրիվությամբ կառավարում ենք իրավիճակը, եւ այն գտնվում է վերահսկողության ներքո: Հիշեցնեմ, որ համավարակի տարածման առաջին իսկ օրվանից, Վրաստանի կառավարությունը ժամանակին եւ արագ քայլեր ձեռնարկեց: Այդ քայլերի կարեւոր պայմանն այն էր, որ վարակի տարածման ռիսկը կառավարվեր այնպես, որպեսզի սոցիալ-տնտեսական եւ, թեկուզ քաղաքական կյանքը, որոշակիորեն հարմարեցվեր վարակի կառավարման պայմաններին:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԵՐԿՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ ՉԿԱ»

Սեպտեմբերի 10-ին, Հայաստանի կառավարության նիստում երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ վիճակագրական ցուցանիշները ցույց են տալիս, որ Հայաստանում սոցիալական ճգնաժամ տեղի չի ունեցել եւ չկա:

Վարչապետը նախ՝ նկատեց, որ համաճարակը սոցիալական ու տնտեսական էական վնասներ է պատճառել, բայց շատ կարեւոր է գնահատել այդ վնասները:

- Կա՞ն ցուցանիշներ, որոնք կօգնեն հասկանալ, թե ինչ չափի սոցիալական վատթարացում է եղել երկրում:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԵՎ ԵՐԿՐԻ ՄՅՈՒՍ ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿԼԻՆԻ ՀԵՌԱՎԱՐ, ԻՍԿ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ՝ ԿՐԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 11-ին, վերջին օրերում կորոնավիրուսի վարակման դեպքերի կտրուկ աճի (սեպտեմբերի 9-ը՝ 45, 10-ին՝ 57, 11-ին՝ 87) կապակցությամբ, միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստի ավարտից հետո, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ Թբիլիսիում, Գորիում, Ռուսթավիում, Քութայիսիում, Զուգդիդիում եւ Փոթիում սեպտեմբերի 15-ից հանրակրթական դպրոցներում ուսուցումը կանցկացվի հեռավար, իսկ հոկտեմբերի 1-ից՝ դասերը կանցկացվեն դպրոցներում:

- Այդ քաղաքներում ուսումնական գործընթացը դպրոցներում հեռավար կսկսվի սեպտեմբերի 15-ից, իսկ հոկտեմբերի 1-ից դասերը կանցկացվեն արդեն դասասենյակներում: Այդ ժամանակահատվածն անհրաժեշտ է, որպեսզի ստույգ գնահատենք այսօր ընթացիկ ռիսկերը: Դրա համար անհրաժեշտ է երկու շաբաթ, եւ մենք արդեն ընդունել ենք լրացուցիչ որոշում՝ երեխաների հետ կապված,- հայտարարեց վարչապետը:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՅԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆԻՆ

Մենք արդեն հաղորդել ենք, որ «Վրաստան» թերթի բազմամյա խմբագիր Վան Բայբուրթյանին, ծննդյան օրվա կապակցությամբ, իրենց շնորհավորանքներն էին հղել Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, Վրաստանի եւ Հայաստանի պաշտոնատար այլ անձինք: Այս օրերին թերթի խմբագրի ծննդյան հոբելյանի առիթով իր շնորհավորական ուղերձը հղեց նաեւ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան: Ուղերձում ասված է.

Բատոնո Վան.

Ողջ սրտով շնորհավորում եմ Ձեզ՝ հոբելյանի առթիվ:

Դուք, որպես լրագրող եւ քաղաքական-հասարակական գործիչ, վիթխարի ավանդ եք ներդրել վրացիների եւ հայերի բարեկամության ամրապնդման գործում:

«Վրաստան» թերթը, որը այս տարվա վերջին կդառնա 100 տարեկան, Ձեր գլխավորությամբ նշանակալի դեր է կատարում վրաց պետության շինարարության գործում:

Ձեր գործունեությունը հիանալի օրինակ է ապագա սերունդների համար, որոնք պետք է շարունակեն դարերի ընթացքում հաստատված երկու ազգերի փոխադարձ հարգանքն ու սերը:

Կրկին անգամ շնորհավորում եմ ծննդյան օրվա առթիվ, մաղթում առողջություն եւ երկարակեցություն:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

ԸՆՏՐԱԾՈՒԾԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՔՍԱՆՅԱԿԸ՝ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՇԵՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՆ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Սեպտեմբերի 10-ին, Թբիլիսիում, Մթածմինդայի զբոսայգում կայացավ հոկտեմբեի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության համամասնական ընտրակարգով կուսակցական ցուցակի առաջին քսանյակի շնորհանդեսը:

Միջոցառմանը ելույթ ունեցան «Վրացական երազանք» կուսակցության հիմնադիր, նախագահ Բիձինա Իվանիշվիլին, կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, «Վրացական երազանքի» գործադիր քարտուղար Իրակլի Կոբախիձեն:

Շնորհանդեսին ելույթ ունեցողները մանրամասն խոսեցին 2012 թվականի խորհրդարանական ընտրություններում հաղթանակից հետո՝ երկրում իրականացված փոփոխությունների, կուսակցության նախընտրական ծրագրի մասին: Նշվեց, որ հանրությանը ներկայացվող «Վրացական երազանքի» ընտրացուցակի առաջին քսանյակում, արդեն ծանոթ դեմքերի հետ միասին, ներկայացվել են նրանք, ովքեր ակտիվ ներգրավված են եղել վերջին տարիներին երկրում իրականացվող բարեփոխումներին, նշանակալի ավանդ ներդրել համընդհանուր ճանաչման արժանացած ձեռքբերումների ապահովման գործում:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՎԵԼ Է 66 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ 12 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐԺԵԼ Է ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ընթացիկ տարվա հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների համար քաղաքական կուսակցությունների գրանցման գործընթացն ավարտվեց:

Ինչպես հայտարարեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովում, ընտրությունների համար գրանցվել է 66 կուսակցություն:

Ընտրություններին մասնակցելու համար, ընդհանուր առմամբ, ԿԸՀ էր դիմել 78 կուսակցություն, որից տասներկուսը՝ մերժվել:

«Համապատասխանաբար, ընտրական վարչությունն ընտ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԻՍՏ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉԵՆ ՍԱՀՄԱՆՎԻ

Սեպտեմբերի 11-ին, Վրաստանի կառավարության միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստի ավարտին՝ անդրադառնալով վերջին օրերին կորոնավիրուսով վարակման դեպքերի կտրուկ ավելացմանը, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հայտնեց, որ կառավարությունը մտադիր չէ եւ պատրաստ չէ սահմանել տնտեսական խիստ սահմանափակումներ:

Ինչպես նշեց վարչապետը, համավարակաբանական կլինիկական կառավարման ուղղությամբ ձեռք բերած հաջողություններն արդեն ներգործում են տնտեսական ուղղություններ՝ նպաստելով էկոնոմիկայի արագ վերականգնմանը:

- Մենք բոլորս, քաղաքացիների հետ միասին, առաջին հերթին, շահագրգռված ենք, որ այն հաջողությունը, որին հասել ենք վարակի համավարակաբանական, կլինիկական կառավարման ուղղությամբ, տեղափոխենք էկոնոմիկայի հարթություն, եւ իրականացնենք էկոնոմիկայի արագ վերականգնումը: Դրա համար անհրաժեշտ է, որ արդյունավետ շարունակենք վարակի վերահսկումն ու կառավարումը: Դա այնքան էլ խիստ պահանջ չէ, խիստ պահանջ չէ նաեւ դիմակների կրումը, թեեւ, ինչպես երեւում է, ստիպված կլինենք սահմանել որոշակի սահմանափակումներ եւ, կարծում եմ, որ այդ սահմանափակումներին նշեց հարցում էլ մեր քաղաքացիներն ընբռնումով կմոտենան,- նշեց Գիորգի Գախարիան:

ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱՎԱ. «ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՄԵՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՆ ՉԻ ԴԻՄԱՆԱ»

Սեպտեմբերի 11-ին, երկրի կառավարության նիստի ավարտից հետո, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան հայտարարեց, որ, ցավոք, համաշխարհային համավարակաբանների ենթադրությունն արդարացավ եւ սկսել է կորոնավիրուսի երկրորդ ալիքը:

Նրա խոսքով, կառավարությունը հնարավոր ամեն ինչ անում է, որպեսզի խիստ սահմանափակումների անհրաժեշտություն չզգացվի, քանի որ «երկրի էկոնոմիկան դրան չի դիմանա»:

- Իշխանությունն ամեն ինչ արեց, որպեսզի հենց առաջին օրվանից համավարակային իրավիճակը լիներ վերահսկելի: Բնականաբար, մենք բնակչությանը չէինք խոստանում, որ կորոնավիրուսը կվերանար, դա անհնարին է, թեեւ այն, ինչ մենք խոստանում ենք, դա այն է, որ միասին կսովորենք ապրել համավարակի պայմաններում: Հենց այդ նպատակով էլ գործում ենք, անում այն ամենը, որպեսզի խիստ սահմանափակումների անհրաժեշտություն չծագի, ինչպես արդեն եղել է: Այս նոր հարվածին, բնականաբար, մեր էկոնոմիկան չի դիմանա: Հետեւաբար, փոքր միջոցառումներով ու նաեւ մեր բժշկական անձնակազմի արիեստավարժության շնորհիվ, հուսով ենք, որ այդ գործընթացը, համեմատաբար նվազ ցավագին կհաղթահարենք,- հայտարարեց Նաթիա Թուրնավան:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՎԵԼ Է 66 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րական գործընթացի ամենակարեւոր մասն ավարտել է:

Քաղաքական կուսակցությունների համար հաջորդ փուլը քաղաքական ցուցակներ ներկայացնելն է: Կուսակցությունը - քաղաքական միավորումը պետք է ներկայացնի ԿԸՀ նախագահին (ոչ ուշ քան՝ հոկտեմբերի 1-ը), որից հետո այդ ցուցակները կստուգվեն եւ կսկսվի նշված կուսակցական ցուցակի գրանցման գործընթացը:

Ինչ վերաբերում է մեծամասնական պատգամավորներին, կուսակցությունը - ընտրական միավորումը յուրաքանչյուր մեծամասնական ընտրական շրջանում ներկայացնելու է Վրաստանի խորհրդարանի մեկական անդամի (ոչ ուշ քան՝ հոկտեմբերի 1-ը)»,- ասված է ԿԸՀ-ի հայտարարության մեջ:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ-ՆԻՆՈԾՄԻՆԴԱ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձաժողովը (ԿԸՀ) սկսել է մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունը Ախալքալաքի-Նինոծմինդա ընտրատարածքում առաջադրեց Սամվել Մանուկյանի թեկնածությունը: Նշենք, որ երկուշաբթի, սեպտեմբերի 14-ին, Ախալքալաքիում նրա թեկնածությունը պաշտոնապես կառաջադրվի, նա հանդես կգա 41 ընտրահամարի ներքո:

Ինչպես տեղեկացրին Կենտրոնական ընտրական հանձնաժողովում, Ախալքալաքի-Նինոծմինդա ընտրատարածքում որպես մեծամասնական թեկնածու են առաջադրվել նաեւ Արսեն Կարապետյանը՝ «Եվրոպական Վրաստան», Մելիք Ռահիսյանը՝ «Միասնական ազգային շարժում», Սոցկար Փութուլյանը՝ «Լելոն՝ հանուն Վրաստանի» կուսակցությունից, Արտաշես Հակոբյանը՝ «Հայրենասերների ալյանս»:

Ավելացնենք, որ, բացի կոնկրետ կուսակցության կողմից առաջադրված վերոնշյալ թեկնածուների, առաջիկա ընտրություններին, որպես անկախ մեծամասնական թեկնածու, առաջադրվել է նաեւ Հենզել Մկոյանը, ով դեռեւս 1999 թվականից նախ՝ Նինոծմինդայի, ապա՝ 2002-ից մինչեւ ներկայիս 9-րդ գումարման խորհրդարանի Ախալքալաքի-Նինոծմինդա ընտրատարածքից խորհրդարանի մեծամասնական պատգամավոր է:



ԲԵԼԱՌՈՒՍ

ՎԱՂԱԺԱՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՉԻ ԲԱՑԱՌՎՈՒՄ

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն չի բացառում նախագահական ընտրությունների վաղաժամ անցկացումը:

Ալեքսանդր Լուկաշենկոյի խոսքով, ընտրությունները հնարավոր է տեղի ունենան սահմանադրական փոփոխություններից հետո:

- Մենք պատրաստ ենք իրականացնել սահմանադրական փոփոխություններ, դրանից չենք բացառում, որ տեղի ունենան վաղաժամկետ նախագահական ընտրություններ,- հայտարարեց Լուկաշենկոն:

Հիշեցնենք, որ օգոստոսի 9-ի ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո՝ ողջ Բելառուսում սկսվեցին բողոքի ցույցեր, որի մասնակիցները պահանջում էին ընտրությունների արդյունքների չեղարկում եւ նոր ընտրությունների անցկացում:

ԱՄՆ

ԻՐԱՔԻՑ ԵՎ ԱՖՂԱՆՍՏԱՆԻՑ ՋՈՐՔԵՐԸ ԴՈՒՐՍ ԿԲԵՐՎԵՆ

ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց՝ Իրաքում եւ Աֆղանստանում ռազմական ներկայության կրճատման վերաբերյալ:

Հիշեցնենք, որ Իրաքում եւ Աֆղանստանում պատերազմը վերջացնելու խոստումը, որն սկսվել էր նրա նախորդների կողմից, հանգուցային են եղել Թրամփի նախընտրական ծրագրում, հաղորդել է ՌԻԱ Նովոստին:

ԹՐԱՄՓԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ ՀԱՍՆՈՒՄ Է ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԻ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ժողովրդականության վարկանիշն աճել է հունիսից ի վեր մինչեւ առավելագույն ցուցանիշ: Սեպտեմբերի 8-ի հետազոտությունը ցույց տվեց, որ պետության ղեկավարի պաշտոնում Թրամփի աշխատանքին հավանություն է տալիս հարցման մասնակիցների 47 տոկոսը: Հակառակ կարծիքին է հարցվածների 53 տոկոսը:

Վերջին հարցումը կատարվել է սեպտեմբերի 5-ից 8-ն ԱՄՆ-ի 2 832 գրանցված ընտրողների շրջանում: Վիճակագրական սխալանքը կազմում է շուրջ 1,8 տոկոսային կետ:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՄԱՄԲ, ՉՆԱՅԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ, ՎՐԱՍՏԱՆԸ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԵԼՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՎԱՅՐ Է

Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարությունը հրապարակել է աշխարհի 170 երկրներում, այդ թվում՝ Վրաստանում, ներդրումային միջավայրի վերաբերյալ զեկույցը:

Զեկույցում ասվում է, որ Վրաստանում, ընդհանուր առմամբ, բիզնեսի եւ ներդրումների պայմանները կայուն են:

Զեկույցում ընդգծվում է, որ Վրաստանը բարձր տեղ է զբաղեցնում համաշխարհային բանկի բիզնես վարելու պարզության, ինչպես նաեւ տնտեսական ազատության ինդեքսի ցուցակում: Նշվում է, որ «Վրաստան 2020» տնտեսական ռազմավարությունը նախատեսում է շահավետ քաղաքականություն բիզնեսի համար եւ ներառական աճ ամբողջ երկրում:

«Այնուամենայնիվ, որոշ ընկերություններ արտահայտում են աճող անվստահություն դատական իշխանությունների, առեւտրային գործերը ինքնուրույն, ժամանակին կամ գրագետ վարելու ունակության նկատմամբ: Բիզնես վեճերի որոշ գործեր տարիներ շարունակ ձգձգվում են: Այլ ընկերություններ բողոքում են մունիցիպալ մակարդակում որոշումների կայացման անարդյունավետ գործընթացներից, ինչպես նաեւ մտավոր սեփականության իրավունքների իրականացման թերացումներից, արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականության բացակայությունից, տնտեսական օրենսդրության ընտրովի կիրառումից եւ գույքային վեճերի լուծման բարդություններից: Վրաստանի կառավարությունը շարունակում է աշխատել այդ խնդիրների լուծման ուղղությամբ, եւ չնայած այս մարտահրավերների, մնալ տարածաշրջանի առաջնագծում, որպես բիզնես վարելու լավ միջավայր»,- ասված է զեկույցում:

Պետքարտուղարության զեկույցում հիշատակվում է նաեւ Անակլիա նավահանգիստը:

«2016 թվականին իր նախնական պայմանագրից հետո, բազմիցս հետաձգվել է Անակլիա խորջրյա նավահանգստի նախագծի իրականացումը: Կառավարությունը Անակլիայի զարգացման կոնսորցիումի հետ պայմանագիրը խզել է 2020 թվականին, քանի որ կոնսորցիումը չի կարողացել բավարար կապիտալ հավաքել: Այնուամենայնիվ, կառավարությունը դեռ մտադիր է կառուցել Անակլիայի նավահանգիստը եւ կրկին հայտարարել է մրցույթ: Լոգիստիկայի եւ նավահանգիստների շինարարական ընկերությունները սկսել են Փոթիի նավահանգստի զարգացումն ու ընդլայնումը, որը ներկայումս Վրաստանի ամենամեծ նավահանգիստն է»,- ասված է զեկույցում:

Պետքարտուղարության զեկույցում նշվում է, որ օտարման շուրջ վեճերը Վրաստանում հաճախակի չեն, սակայն, մինչ 2012 թվականը, նախորդ կառավարության օրոք, ճանաչված կազմակերպությունները բարձրացրել էին Սվանեթիում, Անակլիայում, Գոնիոյում եւ Սեւծովյան տարածաշրջանում պատմական սեփականության իրավունքի ապօրինի հետկանչման հարցը:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ ՎՐԱՍՏԱՆԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՎ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԱՐԺԱՆԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ 2020» ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ



Սեպտեմբերի 7-ին, Թբիլիսիի մոտակայքում, Վազիանիի զորավարժարանում մեկնարկեց «Արժանի գործընկեր 2020» զորավարժությունը, որին, Վրաստանի զինուժերից բացի, մասնակցում են զորամիավորումներ ԱՄՆ-ից, Միացյալ Թագավորությունից, Ֆրանսիայից եւ Լեհաստանից:

Զորավարժությունների բացմանը ներկա էին եւ ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին, զորավարժությունների մասնակից պետությունների զինուժերի ներկայացուցիչներ:

Իր խոսքում, Գիորգի Գախահան, խոսելով զորավարժությունների նշանակության մասին, հայտարարեց, որ զորավարժությունները բանակի ամենակարեւոր բաղադրիչն են, որպեսզի Վրաստանի եվրատլանտյան ինտեգրումը դառնա վերջնականապես հասանելի, եւ Վրաստանի դերը գլոբալ խաղաղությունում գնալով աճի ու վերջնական փուլում գործընկերների հետ միասին հասնի եվրատլանտյան ինտեգրմանը:

- Բոլորս էլ հասկանում ենք, որ պետք է օրեցօր բարելավենք մեր բանակի վիճակը, նրանց սպառազինությունը, նրանց բարեկեցությունը, եւ բոլորս պետք է հասկանանք, որ նման զորավարժությունները խաղաղության երաշխիք, են Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացու եւ մեր երկրի ու պետության համար: Բացի այդ, բոլորդ գիտեք, որ Վրաստանի զինված ուժերը ակտիվ մասնակցում են տարբեր խաղաղապահ առաքելությունների՝ ինչպես Եվրամիության, այնպես էլ Միացյալ Նահանգների հովանու ներքո: Բոլորս էլ հասկանում ենք, որ այդպիսի զորավարժությունները մեր զինվորներին հնարավորություն են տալիս արժանապատվորեն պաշտպանել իրենց համազգեստը, քանի որ բոլորս պետք է հասկանանք, որ Վրաստանի դերը գլոբալ խաղաղությունում պետք է գնալով աճի եւ վերջնական փուլում պետք է հասնենք եվրատլանտյան ինտեգրմանը,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Ընդգծելով մեկնարկող զորավարժությունների արտակարգ նշանակությունը՝ Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ աշխարհում առկա անտեսանելի մարտահրավերների ֆոնին «Արժանի գործընկեր» զորավարժությունների անցկացումը հաստատում է պատրաստակամությունը, որ շարունակվի համատեղ արժեքների պաշտպանությունը:

Նրա խոսքով՝ Վրաստանի անկախության վերականգնումից ի վեր Միացյալ Նահանգները ավելի քան 4 միլիարդ դոլար է ծախսել երկրի զարգացման վրա:

Նշենք, որ «Արժանի գործընկեր 2020» զորավարժությունը թվով հինգերերդ նման միջոցառումն է, որն անց է կացվում Վրաստանում:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է 5,5 ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ, ԱՌԱՆՁԻՆ ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԹԱՆԿԱՑՈՒՄ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, վերջին տվյալներով երկրում տնտեսական անկումը կազմել է 5,5 տոկոս, ընդ որում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազման միտում է նկատվել գրեթե բոլոր ոլորտներում, բացառությամբ՝ լեռնահանքային եւ վերամշակվող արդյունաբերության:

Միաժամանակ, վիճակագրական ծառայության տվյալներով, ընթացիկ տարվա օգոստոսին միջին տարեկան արժեզրկումը կազմել է 5,7 տոկոս:

Ըստ գերատեսչության, նախորդ ամսվա համեմատ, օգոստոսին 0,5 տոկոսով էժանացել են «սննդամթերք ու ոչ ալկոհոլային խմիչքներ» խմբի ապրանքների ընդհանուր գները: Ամսական այս տվյալները գոյացել են մի շարք ապրանքների գնի իջեցման արդյունքում: Մասնավորապես, 10,6 տոկոսով էժանացել է խաղողը, 2,8 տոկոսով՝ բանջարեղենը: Էժանացել են նաեւ թեյը, սուրճը, կակաոն (0,7տոկոսով): Միաժամանակ, 2,2 տոկոսով թանկացել են ձուն, կաթնամթերքն ու պանիրը:

Օգոստոսին նկատվել է նաեւ տրանսպորտի եւ դրա շահագործման թանկացում: Գերատեսչության նույն հաշվետվության համաձայն՝ տարեկան թանկացումը կազմել է 9,2 տոկոս, մրգեր եւ խաղող՝ 18 տոկոս, թեյ, սուրճ, կակաո՝ 14,9 տոկոս, կաթ, պանիր, ձու՝ 11,7տոկոս, ձուկ՝ 13,5 տոկոս, միս-մսամթերք՝ 8,8 տոկոս, հաց-հացամթերք՝ 9 տոկոս, ալկոհոլային խմիչք եւ ծխախոտ՝ 8,9 տոկոս, կահույք եւ տեխնիկա՝ 9,7 տոկոս:

ԼՈՒՐԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՑ ԱՆՎՃԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ ԵՎ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

Սեպտեմբերի 8-ին, Ախալցիխեում «Իմեդի» կլինիկայի տարածքում, «Ազգային սքրինինգ կենտրոն»-ի կողմից, անցկացվեց անվճար հետազոտություն՝ կանանց կրծքագեղձի (40-70 տարիքային խումբ) եւ արգանդի վզիկի քաղցկեղի (25-60 տարիքային խումբ) հետ կապված:

Նմանօրինակ հետազոտություն կանցկացվի նաեւ Ախալքալաքիում այսօր՝ սեպտեմբերի 12-ին, քաղաքի կենտրոնական «EVEX» հիվանդանոցի տարածքում:

ՄԱՌՆԵՈՒԼԻՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ

Սեպտեմբերի 9-ին, Քվեմո Քարթլիի երկրամասի պետական լիազոր Շոթա Ռեխվիաշվիլին եւ Մառնեուլիի քաղաքապետի պաշտոնակատար Զաուր Տաբատաձեն ծանոթացան մունիցիպալիտետում իրականացվող եւ իրականացվելիք ենթակառույցային նախագծերին: Նշենք, որ ավարտին է մոտենում մունիցիպալիտետի 8 գյուղերն ընդգրկող, շուրջ 19107 բնակչի համար նախատեսված, կենտրոնական եւ տեղական բյուջեից 2 677 520 լարի արժեքով ջրամատակարարման համակարգի կարգավորումը, ավարտվել է Շահումյան-Խիխանին միմյանց կապող, տեղական բյուջեից 657 452 լարի գումարով ֆինանսավորված կամուրջի շինարարությունը: Ընդհանուր առմամբ, մունիցիպալիտետում արդեն իրականացվել են տարածաշրջանային զարգացման հիմնադրամի կողմից 4 միլիոն լարիի գումարով ֆինանսավորված ենթակառույցային աշխատանքներ:

ԾԱԼԿԱՅՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՄԻՋԳՅՈՒՂԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Ծալկայում արագ տեմպերով առաջ են տարվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի կողմից 2 468 792 լարի գումարով ֆինանսավորված Բեշթաշեն-Ախալշեն գյուղերի միջեւ 4102 մետր ճանապարհահատվածի բետոնապատման աշխատանքները: Ընթացիկ տարվա օգոստոսի 4-ին սկսված ենթակառույցային նախագիծն ավարտվելու է 2021 թվականի հուլիսի 30-ին:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՁՄՈՒՆԱՎԼԵԳԻՆ ՏԱՄՏԱԽԵՇՐՈ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտի տեղեկատվությամբ՝ «Փոթի եւ Ղուլավիի նավահանգիստներ ու Փոթիի ազատ տնտեսական գոտի» սահմանային անցակետերով երկիր մուտք գործեց 5 միավոր հատուկ բեռնատար ավտոմեքենա:

Մաքսային աշխատակիցների կողմից 3 միավոր բեռնատար ավտոմեքենաների հարցով, համապատասխան ձեւակերպումների ընթացակարգի ժամանակ դուրս գրվեցին տրանսպորտային միջոցների գրանցման վկայագրեր: Երկու միավոր տրանսպորտային միջոցների ստուգումից հետո բացահայտվեց, որ դրանք պահանջում են հատուկ պարտադիր թույլտվություն: Հատկանշական է, որ փոխադրումների ընկերության լիազոր ներկայացուցչի կողմից արդեն ներկայացված թույլտվության մեջ նշված բեռնատար ավտոտրանսպորտը չի նախատեսված համապատասխան բեռի ծավալի փոխադրման համար, որի համար էլ դրան տրվել է համապատասխան բեռնափոխադրման իրավունք ունեցող մեքենաների հետ միասին՝ ներկայացնել «Ճանապարհային ուղեւորության մասին» Վրաստանի օրենքով սահմանված պահանջներին համապատասխան տրված թույլտվությունը:

Երկրորդ անգամ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո պարզվեց, որ նոր թույլտվության համարը լրիվությամբ համապատասխանում է նախորդ թույլտվության գրանցման համարին եւ դրանով փոխված էին միայն բեռնատար ավտոմեքենաների համարները:

Մաքսային դեպարտամենտի լիազոր անձինք, կասկածի հիման վրա, ներկայացրած փաստաթղթերի ստույգությունը պարզելու նպատակով, վարչական մարմինների հետ ստուգեցին թույլտվության հանձնման տեղեկատվությունը, որի արդյունքում պարզվեց, որ վերոնշյալ թույլտվությունը չի տրվել նրանց կողմից: Գործի նյութերը հետագա արձագանքման նպատակով, փոխանցվել է ներքին գործերի նախարարությանը: Հետաքննությունը տարվում է քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածով, ինչը նախատեսում է կեղծ փաստաթղթերի ներկայացում, օգտագործում:

ՄԱՔՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ ԵՐԵՔ ԴԵՊՔ

Ներկա դրությամբ, նոր կորոնավիրուսով վարակված երեք աշխատակիցների առողջական վիճակը բավարար է:

Կորոնավիրուսով (COVID-19) ռիսկի խմբի նպատակային թեստավորման շրջանակներում, առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի կողմից սահմանված կարգով եւ հաջորդականությամբ, ստուգվել են «Բաթումիի ձեւակերպման տնտեսական գոտու» մաքսային աշխատակիցներն ու ողջ անձնակազմը (ընդհանուր առմամբ՝ 185 մարդ): Միաժամանակ, նպատակային ծրագրված թեստավորում անցան «Սարփի» սահմանային անցակետի մաքսային 99 աշխատակիցներ:

Կորոնավիրուս է հաստատվել երեք աշխատակիցների մոտ (Լուգարի լաբորատորիայում ստուգված նմուշների պատասխաններում COVID-19-ը հաստատվել է):

Հատկանշական է, որ նախականխիկ միջոցառումների շրջանակներում, նպատակային թեստավորում անցան ռիսկի խմբում գտնվող բոլոր աշխատակիցները: Միաժամանակ, մաքսային դեպարտամենտի բժիշկ-համավարակաբանների կողմից անցկացվեց անհատական մոնիտորինգ, որը նախատեսում էր համապատասխան կլինիկական նշանների գնահատում եւ ստացված տեղեկատվության հիման վրա, համապատասխան մանրամասն վերլուծության անցկացում:

Հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի հետ համագործակցությամբ, կորոնավիրուսի լրիվ թեստավորման գործընթացն աստիճանաբար անցկացվեց եկամուտների ծառայության մաքսային անցակետերում եւ տնտեսական ձեւակերպման գոտիներում:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը բոլորին մաղթում է արագ ապաքինում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՔՍԱՆՅԱԿԸ՝ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՇԵՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

Ընտրացուցակի առաջին քսանյակի շնորհանդեսի արարողությանը հնչեցրած իր խոսքում, «Վրացական երազանք-

ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին, նախ շնորհակալություն հայտնեց բոլորին՝ ցուցաբերած վստահության եւ աջակցության համար: Ես եւ իմ թիմը գնահատում ենք այդ վստահությունը: Հենց այդ վստահությունն ու ցուցաբերած աջակցությունը ամրացնում է այն համոզմունքը, որ մենք համատեղ երկիրը կտանենք զարգացման եւ հաջողության, յուրաքանչյուր ընտանիքի բարեկեցության ճանապարհով: Մենք կհասնենք այդ նպատակին, համոզված եմ, արհեստավարժների այն թիմի շնորհիվ, որն այսօր կներկայացվի, եւ որոնք լիովին պատասխանատու են իրենց գործունեության համար: Թիմի անդամներից յուրաքանչյուրը պատրաստ է ծառայել ժողովրդին, ծառայել երկրին: Այս թիմում կան մարդիկ, ովքեր արդեն ապացուցել են, որ ամենաբարդ իրավիճակում անգամ կարողանում են կարգավորել հարցերը, մնալ հավատարիմ իրենց գաղափարներին եւ գործին:

Մենք արդեն իրականացրել ենք այնպիսի զանգվածային նախագծեր, որոնց իրականացմանը ոչ ոք չէր հավատում, ոմանք նույնիսկ դեմ էին դուրս գալիս՝ ելնելով նեղ կուսակցական շահերից: Իմացեք, որ «Վրացական երազանքը» կրկին կշարունակի ճանապարհների, կամուրջների, թունելների, համալսարանների, դպրոցների եւ մանկապարտեզների շինարարությունը, գյուղերի աջակցությունը, բնակչության առողջական խնդիրների հոգածությունը:

«Վրացական երազանքի» հաղթանակը յուրաքանչյուր քաղաքացու համար խաղաղության եւ բարեկեցիկ կյանքի երաշխիքն է, «Վրացական երազանքի» հաղթանակը՝ Վրաստանում խաղաղության պահպանման, երկրի ժողովրդականացման եւ կայուն զարգացման գրավականը: «Վրացական երազանքի» հաղթանակը՝ Վրաստանի հաղթանակն է:

ՄԵՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՈՉ ԹԵ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ, ԱՅԼ ԱՊԱԳԱ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

«Վրացական երազանք» կուսակցության գործադիր քարտուղար Իրակլի Կոբախիձեն, իր խոսքում նախ՝ անդրադարձավ կյանքի գրեթե բոլոր ոլորտներում կուսակցության կողմից իրականացված բարեփոխումների հարցին, նշելով, որ այդ ուղղությամբ ձեռքբերումներն ավելի քան նշանակալի են:

- Ինչպես գիտեք, երկրի հաջողությունն ինքնին չի գալիս, այն ստեղծում են հաջողակ մարդիկ, հայրենասերներն ու արհեստավարժները, որոնց ուղենիշը հայրենիքի եւ ստանձնած գործի սերն է, երկրի արագ զարգացման ու մարդկանց նկատմամբ հոգատարությունը,- իր խոսքում ասաց Իրակլի Կոբախիձեն՝ հավելելով, որ հենց այդ սկզբունքն էլ դրվեց կուսակցական ցուցակի ձեւավորման հիմքում:

Ներկայացնելով ընտրացուցակի առաջին քսանյակը, Իրակլի Կոբախիձեն, որպես առաջինն ըստ ցուցակի, առաջադրեց Վրաստանի գործող վարչապետ Գիորգի Գախարիային, ընդորում, նշելով, որ նա միաժամանակ ներկայացվելու է ոչ թե որպես վարչապետի թեկնածու, այլ երկրի ապագա վարչապետ:

- Մարդու, որը հիանալիորեն համադրում է հայրենասիրությունն ու արհեստավարժությունը, ով ունի առաջնորդի եւ կառավարման առանձնակի շնորհ,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Իրակլի Կոբախիձեի խոսքով, Գիորգի Գախարիայից բացի, առաջին քսանյակում են Արչիլ Թալակվաձեն, Իրակլի Կոբախիձեն, Թեա Ծուլուկիանին, Մամուկա Մդինարաձեն, Կախա Կուճավան, Գիորգի Կախիանին, Մարիամ Քվրիվիշվիլին, Միխեիլ Սարջվելաձեն, Մայա Բիթաձեն, Միխեիլ Դաուշվիլին, Գիորգի Ամիլախվարին, Վիկտոր Սանիկիձեն, Մակա Բոճորիշվիլին, Շալվա Պապուաշվիլին, Դավիթ Կաճարավան, Նիկոլոզ Սամխարաձեն, Գիորգի Խելաշվիլին, Մարիամ Լաշխին, Բեքա Դավիթուլիանին:



ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԾԱՆՈԹԱՆՈՒՄ Է ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ

«Վրացական երազանքի» կողմից Ախալքալաքի-Նինոծմինդա ընտրատարածքում առաջադրված մեծամասնական պատգամավորության թեկնածու Սամվել Մանուկյանը շարունակում է իր նախընտրական քարոզարշավը: Դրա շրջանակներում, պատգամավորության թեկնածուն, Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Յուրի Հունանյանի հետ, այցելել է Գոգաշեն, Աբնիա, Քարցեփի, Ազմանա եւ Հոկամ գյուղեր, ծանոթացել տեղում իրականացվող ենթակառույցային նախագծերին: Մասնավորապես, նշվեց, որ Գոգաշենում մոտ ժամանակներս կսկսվի ջրամատակարարման համակարգի կարգավորումը, ինչպես նաեւ նոր մանկապարտեզի շինարարությունը, Ափնիում եւ Գոգաշենում ավարտվել է դպրոցների վերանորոգումը:

Սամվել Մանուկյանը տեղացիների հետ հանդիպմանը խոստացավ, հնարավորության սահմաններում, աջակցել իրականացվող նախագծերի շուտափույթ ավարտմանը:

ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ Է

Իր նախընտրական քարոզարշավի շրջանակներում, «Վրացական երազանքից» Թբիլիսիի Իսանի ընտրատարածքում առաջադրված մեծամասնական թեկնածու Կախա Կախիշվիլին՝ հանդիպեց Վրաստանի ազգային համալսարանի ուսանողների հետ: Հարցուպատասխանի պայմանակարգով անցած հանդիպմանը՝ պատգամավորության թեկնածուն հատկապես կանգ առավ երիտասարդներին անհանգստացնող զբաղվածության հարցին, նշելով, որ կուսակցության նախընտրական ծրագրում հարցը ներառված է եւ հնարավորինս կկարգավորվի:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՇՐՋԱՆՈՒՄ՝ ԲՈԼՈՐԻՑ ՇԱՏ ՆԱԽԱԳԾԵՐ

Թբիլիսիի Սամգորի ընտրատարածքում կառավարող կուսակցության կողմից առաջադրված մեծամասնական պատգամավորության թեկնածու Սոզար Սուբարին՝ շարունակում է հանդիպումները տեղի բնակիչների հետ: Այս անգամ նա եղավ Վարկեթիլիի, Երրորդ զանգվածի, Աֆրիկայի թաղամասերում: Ինչպես նշեց պատգամավորության թեկնածուն, տարածքով մայրաքաղաքի ամենամեծ շրջանում պետք է իրականացվեն մեծ թվով ենթակառույցային նախագծեր, որոնք առավել կնպաստեն՝ ինչպես զբաղվածության, այնպես էլ մարդկանց բարեկեցիկ կյանքի ապահովմանը:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՁԼՄ-ՆԵՐԻՑ

ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ. «ՉԵՄ ԿԱՐԾՈՒՄ, ՈՐ ՍԱԱԿԱՇՎԻԼԻՆ ԴԻՄԻ ԱՅԴ ՔԱՅԼԻՆ, ԸՍՏ ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ՝ ՆՐԱՆ ԿԲԱՆՏԱՐԿԵՆ»

Հայաստանի «Առաջին լրատվական» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի զրուցակիցն է Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու խորհրդական, հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Վան Բայբուրթյանը:

- Պարոն Բայբուրթյան, Վրաստանում ուշագրավ ներքաղաքական պրոցեսներ են զարգանում: Նախկին նախագահ Սաակաշվիլին հայտարարել է, որ պատրաստ է ընդդիմության հաղթանակի դեպքում՝ երկու տարով ստանձնել վարչապետի պաշտոնը: Ի՞նչ զարգացումներ են հնարավոր:

- Սաակաշվիլու հայտարարություններին Թբիլիսին հանգիստ է վերաբերվում: Չեմ կարծում՝ շատ մեծ փոփոխություններ լինեն, բայց իր կողմնակիցների համար սա մի փոքր «դոպինգի» նման է: Իհարկե, կլինի որոշակի ազդեցություն, բայց ոչ այնպիսին, որ իր կուսակցությունը մեծ հաջողության հասնի: Հոկտեմբերի 31-ից հետո բոլորը կտեսնեն, որ այդ կուսակցությունը երեւի կունենա, ինչպես իրենք են ասում, իրենց երկաթե 15-20 տոկոսը:

- Իսկ ինչպե՞ս են Վրաստանում վերաբերվում իր վերադարձի հնարավորությանը:

- Ինչպե՞ս պետք է վերաբերվեն: Քանի որ ինքը դատապարտված է, ըստ Վրաստանի օրենքների՝ նրան պետք է բանտարկեն: Բայց այդ դեպքում էլ մեծ իրարանցում կառաջանա: Ես չեմ կարծում, որ ինքն այդ քայլին դիմի:

- Վրաստանի վարչապետ Գախարիան հայտարարել է, որ նրա վերադարձն ապակայունացում չի առաջացնի, բանտարկելու մասին որեւէ խոսք չկա, հնարավո՞ր է՝ չբանտարկեն:

- Գիտեք, որ համաշխարհային քաղաքականության մեջ ոչ մի երկրում չի եղել այնպես, որ դատապարտված մարդը գա, բանտ չնստի ու հաջողության հասնի: Ես չեմ կարծում, որ Վրաստանը դառնա առաջին երկիրը, անհնար է պատկերացնել, որ դա լինի: Սա ավելի շուտ PR-ի հարց է, ինչպես նշեցի՝ իր կողմնակիցների համար «դոպինգի» նման մի բան: 2012 թվականից մինչ այսօր իր կուսակցությունը ամեն մի խորհրդարանական, տեղական, նախագահական ընտրություններում զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը, եթե այս ընտրություններում տվյալները փոխվեն՝ նոր կարող ենք քննարկել: Արդյոք, կուսակցությունը կգնա՞ մարման, թե՞ կվաստակի, ինչպես իրենք են ասում, իր 20 տոկոսը, պարզ կդառնա առաջիկայում: 2020 թվականի այս ընտրությունները վերջ կտան բոլոր խոսակցություններին, կպարզվի, ունի՞ այդ կուսակցությունը ապագա, թե՞ ոչ: Ասեմ, որ այն հաջողությունները, որոնք ունի «Վրացական երազանք» կուսակցությունը, խոսում են այն մասին, որ ժողովուրդը հավատում է այդ կուսակցությանը: Շատ բան է արված: Ես համարում եմ, որ «Վրացական երազանքի» հետ հավասար այսօր ոչ մի կուսակցություն չի մրցում: Ես նորից եմ կրկնում՝ ժողովրդավարության մակարդակը երկրում «Վրացական երազանքը» հասցրեց ռեկորդային ցուցանիշների: Չեն բանտարկվում ընդդիմության ներկայացուցիչներ, չկան ճնշումներ բիզնեսի նկատմամբ: Սաակաշվիլու կուսակցության պարտության պատճառը երեւի հենց դա էր՝ բանտերում դաժանությունները, բիզնեսի վրա ճնշումը: Այսօր այդ խոչընդոտները վերացվեցին:

- Բայց կան նաեւ քաղաքացիներ, որոնք ուզում են նրա վերադարձը:

- Նորանկախ Վրաստանի պատմության մեջ եղել են Գամսախուրդիայի կողմնակիցներ, Շեւարդնաձեի, իհարկե, կան նաեւ Սաակաշվիլու կողմնակիցներ: Եթե չլինեին այն դաժանությունները, որի պատճառով Սաակաշվիլու կուսակցությունը պարտվեց, ապա այսօր, երեւի, ավելի շատ կլինեին իր կողմնակիցները: Իհարկե, նրա օրոք շատ բան արվեց՝ ոստիկանության, ուժայինների, արդարադատության ոլորտում: Բայց այդ լավ գործերի հետ միասին, հենց ինքն իր վերջին ելույթում խոստովանեց, որ արել է շատ սխալներ, որոնց համար եւ պատժվել է: Իսկ քաղաքականությունն ընդհանրապես շատ է նման հրթիռի, որը բաց է թողնվում տիեզերք, որպեսզի հասնի ուղեծիր: Ամեն մի կուսակցություն, գալով իշխանության, գործունեության տարբեր աստիճաններ ունի, ինչպես հրթիռը: Ամեն մեկն էլ մի լավ բան անում է. եթե մենք վերլուծենք այն գործերը, որոնք իրականացվել են վերջին իշխող կուսակցությունների կողմից, ապա ակնհայտ է, որ այդ հրթիռները բավական բարձր մակարդակի վրա են բարձրացվել: Իհարկե, չենք կարող ասել, որ Սաակաշվիլու օրոք ոչինչ չի արվել, թեեւ այսօրվա իշխող ուժը՝ Բիձինա Իվանիշվիլու կուսակցությունը, բոլոր ոլորտներում այդ հրթիռը շատ բարձր մակարդակի վրա է բարձրացրել, համենայնդեպս, ավելի բարձր, քան նախկին կուսակցությունները: Ժողովուրդն իր մաշկի վրա է դա զգում:

ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ